

ՀԱՄԱԵԼԱՆԵՐ ՌՈՒՍԻՅՈՅ



ԱՌԱՋԻՆ

ՅԱՐԻ

ՀԱՄԱԵԼԱՆԵՐ ՌՈՒՍԻՅՈՅ լրագրող Տրատարականութիւնը և իւրաքանչիւր ամսի 10 ին և 20 ին . տարեկան գինը ճՈՒՍՏՆԻ Տետ 'ի միասին է 5 ռուբլ . արծաթ . իսկ կէս տարուանը 3 ռուբլ . արծ . կանխիկ վճարելի :

ՅՈՒՆՈՒԱՐԻ 10

Հ. 11

1862 ԱՄԻ

ՔԱՆՈՒՑՈՒՄՆ

ՀԱՄԱԵԼԱՆԵՐ ՌՈՒՍԻՅՈՅ լրագրչիս ստացուածն աւելի դիւրացուցանելոյ համար՝ վճարելիք բանալ ստորագրութիւն և նորա համար միայն, որոնց ճաշարի, նշանակելով դին (թէ Սուբուայի մէջ, և թէ ուղարկելով) արծաթ համար 3 ռուբլ . արծ . իսկ կէս արծաթ համար (այն է՝ Փետրուարից մինչև Օգոստոս ամիսը)՝ 1 ռ . 50 կ . արծ .

Բաժանորդութեան ցանկացողը կարող է ուղարկել նշանակելով գինը Տետուեալ հասցէի .

«Въ Редакцію Армянской газеты Вѣстника Россіи, Г. Зармайру Месеріанцъ, въ Москвѣ, въ Армянск. переулкѣ въ домѣ Армянской церкви» .

Կանխիկ փողը չվճարողին՝ լրագրիս չուղարկուի :

ՓՐԷՆՍ ԱԼՊԷՐՏ

Մեզ զից թագուհւոյ ամուսինն՝ Քրէնս Ալպէրտ, որ վախճանեցաւ նորերուն, ծընուած էր 1819 թուականին, ուրիմն էր նա 42 տարեկան : Նա Սաքսէն - Բայուրիեան Էլինաս դքսի երկրորդ որդին էր, և ազգական Պէլճիքայի 1 հովորա թագաւորին : 1840 թուականին Վիկտորիա թագուհին ընտրեց նորան իւրեան ամուսին : Մեզ զից շիք պատուում էին նորան նորա խելքի, բարութեան և Բրիտանեան ազգը սիրելոյն համար : Միայն վերջին արեւելեան պատերազմի ժամանակ սկսաւ քաղաքական գործքերի խառնուել, բայց ընդդիմութիւն դրանելով Փառլամէնթի մին մասնի մէջ, ձեռք քաշեց այդ գործից : 1837 թուականին նա լսեց Պոնի համալսարանի դասախօսութիւնքը, և ապա Մոնեաղայի կարգեցաւ Քէմպրի-ձեան համալսարանի : Նա մեծ ուշադրութիւն էր դարձուցանում զիտութեանց՝ արհեստից և վաճառականութեան կատարելան գործութեանց վերայ, և մեծ օգնութիւն ցոյց տուաւ 1851 թուականի համաշխարհական տեսարանին : Քրէնս Ալպէրտը բազում բարեգործութիւնք էր անում, և թէ պէտ ստացաւ նա Արտիստ - Ամուսին կոչումն :

բայց չունէր ոչ մի իշխանութիւն, և չէր խառնուում բնաւ տերութեան գործքերին, այլ էր Հայր բարի՝ արժանի զազափար լինելու : Նորա մահը արտանցոյց ոչ միայն նորա ամուսինը և ազգականները, այլ և բոլոր Անգլիայն : Նորա մահուան երկրորդ օրը՝ բոլոր լրագիրները տպուեցան սև շրջազիծներով, ի նշան սգոյ :

ՏՕՂԻԱՍ ՈՒՍՆՈՂԻ ԳԱՏԱԳԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Մեզ զից միջին յայտնի է Տօղիաս ուսանողի յանցանքը, որ համարձակուած էր արտաճանակ արձակելու Յունաց թագուհւոյ վերայ . յայտնի է նոյնպէս և նորա մահու դատապարտուելը : Միջիմ պատմեք թէ այդ դատապարտութիւնը ինչպէս կատարուեցաւ :

Մուսուտուանից իսկ խուան բազմութիւն ժողովուում էին այն փողոցներում, որ կից էին այն տանը՝ որի մէջ պիտի նիստ ունենային դատաւորները : Դամբ 10 ին նիստն բացուեցաւ, և նախագահը երկու անգամ հարկադրուեցաւ հրամայել, որ հանդիսականաց դուրս հանեն դահլից :

Հանդիսականաց մէջ գտանուում էին ծերակուտի անդամներ, երեսփոխաններ, բարձրաստիճան անձինք, որոց հետ և Գաղղիացւոց ղեկավար Պ. Պուրբէ, և շատ տիկիներ : Ամբաստանեալ Տօղիասը (որ տասն և ութ տարեկան երիտասարդ է), նստած էր աթոռի վերայ ուղղակի դէմ յանդիման դատաստանի նախագահին . նա անհոգ էր ցոյց տալիս իւրեան՝ անահ և անարտում : Նա ստէպ ստէպ դառնում էր դէպ ի հանդիսականքը, որոց մէջ կային և ոմանք նորա ստաջուայ ընկերներից : Նա վայելչակազմ է մարմնով, չոր և դուրնաթափ : Պատասխանում էր արագութիւն,

սուր, իւրաքանչիւր անգամ ուղղակի, հաստատապէս կամ բացասաբար, երբէք չշեղուելով դէպ ի խուսափողական պատասխանատուութիւն : Վանիցս անգամ նա վեր կացաւ, և աներկիւղաբար մօտեցաւ նախագահին՝ ցրել քանի մի հանգամանքը, որք նկարագրուած էին ամբաստանութեան թղթի մէջ : Մամուում էր նա մտախառն տարօրինակ և միանգամայն իւր վիճակից գոհ մարդու :

Վարդալով գաղղիական ուկրալցիայի՝ և այլ յեղափոխութիւնների պատմութիւնը, և իմանալով օրագրերից Պէքքէրի (Բրուսիոյ թագաւորի վերայ արտաճանակ արձակողը) քրէական յանցանքը, կարծեց նա՝ թէ թագուհին սպանելով՝ երկու նպատակի կհասնի . այն է՝ յայտնի լինել ներկայ ժամանակուան, և մին էջ բռնել պատմութեան մէջ :

Պատարճնութիւնը շատ երկարեցաւ, վասն զի ամբաստանուածի պաշտպանողքը՝ նորան արդարացներու համար բերին շատ վիճաներ : Բայց գործողութիւնը հերքել անկարելի եղաւ . դատապարտեալը բռնուեցաւ նոյն իսկ եղեռնագործութեան տեղում . միւսում էր միայն մեկնելով մեղմանել յանցանքը այնպէս, որ նա կարողանայ իրաւունք ստանալ ներողամտութեան : Աւ այսու պատճառաւ նորա փաստարանները հաստատում էին, թէ Տօղիաս գործած էր իւր յանցանքը մեղմանողութեան (անգամայն) մէջ գտանուած ժամանակին : Մտում էին նոյնպէս թէ լեվոլբրով նշան դնել չէ կարելի, ուրիմն և Տօղիասը չունէր նպատակ խիկել թագուհւոյն : Փաստարանները պիտի սկսանէին կարգալ իւրեանց պաշտպանողական ձառերը երկիցիան ժամը 10 ին :

Մյն ժամանակ Տօղիասը կանգնեցաւ և սկսաւ խօսել : Թողլ տուին նորան խօսելու՝ կարծելով, թէ նա կամի խոստովանել իւր յանցանքը և զղջալ, բայց սխալուեցան : Տօ-

զեասի առաջին բառերը էին. «Բռնակալութիւնը, արդէն երեսուն տարի է»...: Ամբաստանուածի հայրը՝ որ այն ժամանակ այն տեղ ներկայ էր գտանուում, վաղեց որդւոյն մօտ և ստիպեց նորան 'ի նորոյ նստել իւր աթոռի վերայ: Փաստաբանները յայտնեցին՝ թէ ինքեանք կերթան, եթէ նա մին այլ բառ ևս ասէ: Այս սպառնալիքս հանդարտեցուցին նորան:

Փաստաբանները սկսան կարդալ իւրեանց պաշտպանողական ճառերը: Արդէն կէս զիշեր էր, երբ որ այդ ճառերի ընթերցմունքը վերջացան: Ահնեալը՝ Պրօքուրորը մեկնեց դատավճուի բովանդակութիւնը, և հերքեց փաստաբանների պաշտպանութիւնը: Յետոյ ատենանք առաջարկեց դատաւորներին հետեւեալ հարցմունքները. 1. 2. Հասկանալով արդեօք կատարեց ամբաստանուածը իւր յանցանքը, թէ ցնորմանց մէջ. 3. Մեղաւոր է նա այն յանցանաց մէջ՝ որ նորա վերայ դրնում են, և որ ինքն խոստովանեցաւ:

Գատաւորները միաձայն յայտնեցին, թէ ամբաստանուածը գործեց իւր յանցանքը՝ հասկանալով թէ ինչ է անում, և թէ՛ նա մեղաւոր է: Այն ժամանակ նախագահը բացառ օրինադիրքը և կարգաց 123 երորդ յօդուածը, որի զօրութեամբ Տօղիսը մահու է դատապարտուում: Մինչև ցայժմ ամբաստանեալը կանգնած էր աներկիւղ համարձակութեամբ. բայց այդ լսելուց յետ սկսաւ դողալ. ծնիները թուլացան և անկառուշաթափ աթոռի վերայ:

Ա՛ ճիւղը յայտնելուց յետ հանդիսականները ցրուեցան, դահլիճը փակեցին, և Տօղիսին կապեցին շղթաներով և տարին 'ի բանտ:

Հ Ա Մ Բ Ա Ի Ն Ե Ր

ՄՈՍԿՈՒԱ

1861. Դեկտեմբեր 23.

Տաճկաստանի մեր պատուակի թղթակիցը իւր վերջին նամակովը ծանուցանում է մեզ թէ Փարիզի մէջ սպաղորուած «Փրէշ» անուն լրագրին 55 թուոյն (որ 'Նոյեմբերի 22 է), և Օմիւռնիոյ մէջ սպաղորուած «Արշալույս Արարող» անուն լրագրին 658 և 659 համարներին մէջ, սպղորուած են մեր լրագրի համար քանի մի բարեխրախոյս խօսքեր, որոց մէջ շնորհաւորում է մեր նոր ձեռնարկութիւնը, և մողթուում է նորան յաջողութիւն և յարատևութիւն: «Ուր» «սիոյ մէջ (ասում է «Փրէշ») խմբագիրը)

«այսպիսի թերթ մը հրատարակին (այսինքն «Համբաւաբեր Ռուսիոյ լրագիրն») ազգին «յառաջադիմութեանը ցանկացողաց աւելի «ուրախութիւն և քաջալերութիւն կպատւածուէ, տեսնելով որ հոն ալ մերադնայք «մեծ ջանք ունին ամեն դժուարութեանց «յաղթելով՝ ընթերցումը տարածելոյ իրենց «մէջ. ինչպէս մեր նոյն ուրախութեամբ շնորհաւորեցինք անոր հրատարակումը, և «կմաղթենք ամենայն յաջողութիւն և յարատևութիւն», և այլն:

Հրատարակաւ ընդունելով այդ բարեմաղթութիւնը՝ Համբաւաբերի խմբագրիչը, կիւլթայ ինքն ևս հրատարակաւ յայտնել իւր սրտի խորին շնորհակալութիւնը մեծարոյ ազգասէր խմբագրին՝ «Փրէշ» լրագրի Պ. Ա. Մարտիանին, և մեծարոյ հայրենասէր խմբագրին «Արշալույս Արարող» Պ. Ղ. Պարտապետին, խոստանալով իւր կողմից այսուհետև ևս աշխատել ոչ պակաս զօրութեամբ 'ի փառս և 'ի պայծառութիւն մեր ամենասիրելի ազգին, յաղթելով որքան հնար իցէ նամ դժուարութեանց՝ որ իւրաքանչիւր քայլում եղանում են նորա առաջը:

Այսօր կզարձնենք մեր ուշադրութիւնը նաև Շամսիւոյ մէջ պատահած մի անցքի վերայ, որի նկարագրութիւնը տպուած է Հիւսիսամիայլ օրագրի երկոստասներորդ տետրակում 1861 ամի: Թէպէտ և 'ի վաղուց յայտնի էր մեզ այդ անցքը, բայց քանի մի արգելափակ պատճառներ խափանարկու եղան մեզ հրատարակելու այն՝ իւր ժամանակին: Իսկ այժմ, երբ որ այդ անցքի համառօտ պատմութիւնը տպուած է մեր օրագրաց մինի մէջ, աւելորդ չէ ուրեմն և մեր կողմից յաւելացնել նորա վերայ քանի մի խօսք:

Յայտնի է, որ Շամսիւի քաղաքը 'ի վաղուց անտի կեդրոն՝ կամ լաւ ևս ասել՝ Սերմ նարան է եղած Բողոքական քարոզիչներին: Ուստի անհնարին է, որ նոցա վարդապետութեանց գոնեան քանի մի սերմերը փախուկ հողի վերայ անկած լինելով՝ մինչև ցայժմ իւրեանց պտուղը տուած չլինին: Մեր միաժողովրդի մին մասը խաբուելով այդպիսի վերոնոյց քարոզութիւններից, անկաւ նոցա ուռկանը, և մանաւանդ քաջալերելով ևս մեր ազգակցաց մի քանիսի դրդումներից, վերջապէս հասաւ այն ստիճանի, որ Հոգևոր Տեսչութեան վեհադոյն հրամանաւ մերժուեցան նոքա 'ի Հայաստանեայց եկեղեցւոյ: Բայց յուսով ենք՝ թէ

մեր բարեպաշտ համազգիքը վերջապէս խելքի գալով՝ թողուն որ և իցէ կրօնական խնդիր և երկպառակութիւն, որպէս յառաջուց ևս քանիցս անգամ ասած ենք, և հաստատուն մնան իւրեանց՝ 'ի Սրբոյն Գրիգորէ Ղուսաւորչէ աւանդած՝ քրիստոնէական հաւատի մէջ (որին չկարողացաւ հիմնադրատակ առնել կամ խախտել նաև Յազկիւրաի թուրք), ամենևին ուշ չզարձնելով ոչ մի այլալրօնի օտարուսումն քարոզութեան: Արև իցէ ուղղահաւատ քրիստոնեայն մնալով իւր հայրենի եկեղեցւոյ դաւանութեան մէջ, եթէ բարի գործ գործէ և Աստուծոյ պատուիրանքը պահէ, երկնային արքայութեան կարող է ժառանգ լինել:

Ա կրոյիչեալ անցքը այս է. անցեալ Օգոստոս ամսի 26 ին մեռանում է Շամսիւոյ մէջ Հայազգի Աղասի Արախանովի եւ լեկայն: Հայոց քահանայն չէ կամենում թաղել երեկայն, որովհետև նորա ծնողքը հերքուած են լինում մեր եկեղեցիէն՝ որպէս Առաքելական աղանդաւոր: Արեխայի ազգականները դնում են Պ. Ռոստոմեանց բրժըլի մօտ, խնդրում են նորա միջնորդութիւնը, կամ լաւ ևս ասել՝ բարեխօսութիւնը՝ Սրբազան Գեորգ Առաջնորդէն թողտուութիւն ստանալու երեկայի թաղման մասին: 'Նա ևս նոցա կամքը կատարելու համար՝ նամակ է գրում Սրբազան Առաջնորդին թողտուութիւն խնդրելով երեկայի թաղման համար: Սրբազան Առաջնորդը զիջանելով նորա խնդրանաց, թոյլ է տալիս Հայոց քահանային թաղել երեկայն միայն այսու պայմանաւ, որ «Հայր մեռելոյն Աղասին պարտի գրաւոր բանիւ խոստանալ չչարունակել յայսմհետեւ զաղանդաւորութիւնն, որ հակառակի Հայոց եկեղեցւոյն»:

Բայց Աղասի Արախանովը այդ պայմանին յանձնառու չէ լինում, ասելով՝ թէ ինքն երբէք եղած չէ Առաքելական աղանդաւոր: Որոյ փան և երեկայի թաղումը լինում է սուանց Հայոց քահանայի՝ Հայոց գերեզմանատունէն դուրս՝ քանի մի անձանց ձեռքով:

Այս դէպքից կարելի է նշմարել միայն այս՝ թէ Հոգևոր Տեսչութիւնը Առաքելական ճանաչելով Աղասի Արախանովին՝ հերքում է նորան մեր եկեղեցիէն, և թէ Պ. Ռոստոմեանցը Աղասի Արախանովից աւելի ճշմարիտ Առաքելական Հայ չգրատանելով Շամսիւոյ թեմի մէջ՝ պաշտպանում է նորան: Ում ուրեմն արժան է հաւատալ. Հոգևոր տեսչութեանը՝ թէ Պ. Ռոստոմեանցին:

ՆԵՐՔԻՆ

Գեկտեմբերի 1 ին (ըստ նոր տոմարի) բացուեցաւ ժողովոյի համար վարչաւի - Պրոմպերկեան երկաթուղւոյն առաջին բաժինը, այն է՝ Լուիզէն մինչև Գուլմո:

— Տոյս կայ, որ Օտեսայում բացուի Համալսարան:

ԱՐՏԱՔԻՆ

Փարիզից գրում են. Գեկտեմբերի մտենալը իւր տոներով կենդանացնում է առաւելագէս միշտ անհանգիստ Փարիզը: Իսանութենքը պատրաստում են ընծաների տեսարաններ փոքրերի և մեծերի համար: Թատրոնները պարագած են իւրեանց նոր նոր խաղերով: Օրացոյցները ելանում են մի զինի միջ: Օրագրները քարշում են իւրեանց կողմը նոր գործակիցներ, բաժանորդաց թիւը աւելացնելու համար: Constitutionnel լրագիրը, կարողացաւ որսալ իւր խմբագրատունը Էտմոնտ Ապուին, որ պիտի ստանայ տարին 12,000 ֆրանք՝ ամիսը երկու անգամ ֆրանսիոս պատրաստելու համար՝ Փարիզի հասարակական կենքի վերայ, և այլն: Կարծեմ թէ չէ կարելի գանգատել թէ Փարիզը չզիտէ վարձատրել իւր մատենագիրներին: Օրինաւոր և ուսումնական գրքի համար ոչ ոք չտար այդքան գումար փողի, բայց զուարճալի և սուր ֆելիէթոնի համար՝ պատրաստ են տալու ինչ որ և կամենան:

— Մեծին Բրիտանիոյ երեք միաւորեալ թագաւորութեանց, այն է՝ Անգլիայի, Շոթլանտիայի և Իռլանտիայի մէջ, անցեալ 1860 թուականին նամակատունների ձեռքով ուղարկուած է 564 միլիոն նամակ, որ 19 միլիոնով աւելի է՝ քան 1859 թուականինը: 1860 թուականին նոյնպէս նամակատունների ձեռքով ուղարկուած է 71 միլիոն լրագիր և մինչև 11 միլիոն եօթն հարիւր հազար զիրք: Իսկ այդ նամակատունների մէջ ծառայողաց թիւն եղած է 25,192 մարդ, յորոց 11,428 ն էին փոստի աստիճանաւորք, 11,889՝ փոստալիծն կամ նամակ բաժանող, և այլն: Մի միայն Լոնտոնի նամակատան և նորա մասների մէջ պաշտօն ունեին մինչև 3,650 մարդ: Դոյն 1860 թուականին, տեղութեան լոկ այդ նամակատուններից ստացած օգուտը, ծախքը հանելուց յետ, եղած է 1,102,472 լիւրա (այն է՝ 7,349,860 ու. արծ.) իսկ բոլոր գումարն՝ ծախուց հետ ՚ի միասին՝ եղած է 3,267,662 լիւրա (այն է՝ 21,784,413 ուու. արծ.):

— Լատուիոյ տէրութիւնը ունի դրած հետեւեալ կանոնը օրագիր կամ լրագիր հրատարակել կամեցողաց համար. «Օրագիր հրատարակել կամեցողն պարտական է երաշխաւորութեան համար վճարել թէ՛ օրագիրը հրատարակուած է և նենայի մէջ՝ 8,000 կուլտէն (մին կուլտէնը է 64 կոպ. արծ.), իսկ եթէ այնպիսի քաղաքի մէջ, որոց բնակչաց թիւը 60,000 ից աւելի չեն՝ 6,000 կուլտէն, բայց եթէ այնպիսի քաղաքների մէջ, որոց բնակչաց թիւը 30,000 ից սակաւ է՝ 4,000 կուլտէն, և վերջագէս եթէ միւս այլ քաղաքների մէջ՝ 2,000 կուլտէն»: Ռուսաստանի Հայերը, ինչպէս էք կարծում, շատ շուտ օրագիր կկարողանային հրատարակել:

րակել այդպիսի տէրութեան մէջ. այդպէս չէ՛, Բայց շնայելով այսպիսի դժուարութեանց՝ Բաղմամվէպը և Էւրոպան դեռ շարունակուում են: Ռուսաստանի Հայերին աւելորդ չէր լինելու օրինակ առնուլ պ. Մխիթարեան վարդապետներից:

— Ֆրանքֆուրդ քաղաքում, որ Մայն գետի վերայ է, կազմեցաւ մին ընկերութիւն ընդ անուամբս «...», որովհետեւ նորա անդամները կամենում են կերակուրի մէջ ՚ի գործ ածել ազուաւի միս: Այդ ընկերութիւնը արդէն մեծ սեղան տրուաւ ֆրանսուհի հիւրանոցի մէջ, և կերակուրները մեծաւ մասամբ պատրաստուած էին ազուաւի մսից: Բոլոր հանդիսականքը կերան այդ կենդանին, և շատ համեղ երևեցաւ նոցա: Աստուած կարողութիւն տայ այդպիսի ակորճակ ունեցողներուն:

— Գաղղիոյ Նիցցա քաղաքում ձեռքիւրու աւնուելով օրեւայն խաղալու ժամանակ՝ Մխիթարի անունը դերասանուհին շատ մտնելով թատրոնական բեմի կանթեղներին՝ յանկարծ բռնցուում է նորա հանդերձը, և Ռոմբոնի անունը դերասանը, որ նոյն ժամանակ յիշեալ դերասանուհւոյն հետ երգում էր, մտնելով է նորան և շիջուցանում է իւր ձեռքերով կրակը, շարունակելով մի և նոյն ժամանակ երգեցողութիւնը: Զարմանալի անվեհեցողութիւն:

— Լոյսի Լաբրիկայում ինչպէս յայտնի է մեծ պատերազմ կայ. Պոսթոնի և Նիւ - Եօքքի խաթուները խօսք տուին թանգազին հանդերձներ չհազնել մինչև որ պատերազմը վերջանայ. Իսկ միւս քաղաքների խաթուները դարձան «...» (միաստինք). որպէս էլիօթ դորաւարի կինն՝ աւիւթանդ է եղած իւր մարդուն, և յոյժ յաջողութեամբ կատարում է իւր պաշտօնը:

— Փարիզի քանի մի կոշկակարները կամեցան նուիրել Իտալիոյ դիւցազնին՝ Կարիպալտին, ՚ի նշան իւրեանց մեծարանաց և զարմանաց նորա յաղթութեանց վերայ, մի ջուխտ պօղֆօրտ (երկայն կոշիկ) իւրեանց աշխատանքից: Moniteur de la Cordonnerie (այն է՝ ազդարար կոշկակարութեան արհեստի) օրագիրն խոստանալով տպագրել այդ պօղֆօրտների պատկերը՝ յաւելացնում է և այս, թէ այդ նուիրարեութիւնը մեծ ներգործութիւն ունեցաւ Բարիերայի ձգնաւորի վերայ:

— Լաբրիկայում վարկարայցօ անուանեալ ծովածոցի մէջ այրուեցաւ Հոկտեմբերի 1 ին գաղղիական շոգենաւն L'Infernel (Դեմոն): Կորուստն հաշուում են մինչև երկու և կէս միլիոն:

— Միլան քաղաքի քանդակագործն՝ Փաուտիանի, քանդակում է այժմ մարմարիոնից Կարիպալտի պատկերը լիւհասակ, որ շինել է տալիս Էրնէստ Յուբարին՝ որ բնակում է Լոնտոնում:

— Փարիզի մէջ վախճանեցաւ 71 տարեկան հասակին Պարոն Է. քստէ յնը, երևելի գաղղիացի մատենագիրն և կաթողիկոսական փիլիսոփայն:

— Գեկտեմբերի 16 ին վախճանեցաւ Փորթուգալիոյ թագաւորի եղբայրն՝ ինֆանդ Յովհաննէս, թէ՛ հիւանդութիւնից: Սա ծնած էր 1842 թուականին, ուրեմն էր 19 տարեկան: Իսկ Ինֆանդ

տոն - Աուկուստո, որ նոյնպէս հիւանդ էր, առողջանալու վերայ է:

— Վախճանեցաւ Սիամի թագուհին՝ որ կոչուում էր Ռամմէրի - Ռամ - Ռա - Պիզենի, և որի արժանաւորութիւնն այն էր միայն, որ ծնած էր շատ զաւակ:

— Պ. Լիւիճի Փալմիերի գրում է Նէպոլիս քաղաքից՝ Գեկտեմբերի 13 էն (ըստ նոր տոմարի)՝ թէ վեսուրի բորբոքումը դադարեցաւ:

— Գեկտեմբերի 11 ին կատարուեցաւ Փրէնս Ալպերտի՝ Անգղիոյ թագուհւոյ ամուսնոյն թաղումը:

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Տիւլինեօ անուն մին մարդ, որ երկտասարդութեան ժամանակում զոգուած էր աչաց տեսութիւնից, իւր բոլոր ջանքը ՚ի գործ դնելով գտանելու համար մի այնպիսի հնարք, որով իւր նման անբախտացեալքը կարողանան զրագրութիւն առնել տեսող մարդոց հետ՝ առանց քարտուղարի օգնականութեան, վերջագէս հասաւ իւր նպատակին. վասն զի ներկայացուց նա այժմ Փարիզեան ձեւարանին գիտութեանց՝ իւր հնարած գործիքը, որ կոչուում է Céciregle, որով (որպէս ասում է Պ. Քոմպար), իւրաքանչիւր կտր մարդ, յետ փոքր մի ընտելանալոյ, կարող է գրել մեծ արագութեամբ:

— Մինչև ցայժմ (ինչպէս յայտնի է) Լուսանրկարով կարելի էր նկարել այն ամենայն ինչ որ գրտանում է ցամաք երկրի վերայ: Այժմ կարելի եղաւ նկարել և ծովային զանազան երևոյթները և բաները, որովհետեւ Անգլիացի Ռոմմոն անուն լուսանկարը գտաւ և սորա հնարքը: Արհեստից կատարելագործութիւնները տեսնենք՝ մինչև որ աստիճան հասանելու են այսուհետև:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՓՈՒՆՆԱԿԱԳՐԱՅ ԵՒ ԴՐԱՄ ԸՆԹԱՅԷԸ	
ՓԵՒԵՂՈՒՄԻ Է 5 ՅՈՒՆԱՄԱՐԷ:	
ԼՈՒՏՈՆԻ ԳՐ. 3 ամիս ժամանակով վէճն. 35 - 35	
ԱՄՍՂԵՐՏԱՄ ԳՐ. 3 ամիս ժաման. ցէնը. 165 - 165	
ՀԱՄՊՈՒՐԿԻ ԳՐ. 3 ամիս ժամանակ. շէւ. 29 - 29	
ՓԱՐԻԶԻ ՎԵՐԱՅ. 3 ամիս ժամանակ. սանդ. 351 - 353	
5% լուծուած. տոմսակ. 99 -	
ՌՈՒՍ. երկաթուղ. տոմսակ. 112 -	

ԱՆՃԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՐԻՍՏՈՒՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ, այն է՝ Համառոտութիւն Աւետարանական Պատմութեան, հանդերձ ծանօթութեամբ. 1861. Գինն քաղաքիս մէջ է 50 կոպ. արծ. իսկ այլ քաղաքներ ուղարկելու համար՝ գնողն պարտական է վճարելու նաև փոստի ծախքը (հաշուելով մէկ օրինակից մինչև երեք օրինակ՝ մէկ ֆունթի տեղ), այն է՝ 30 կոպ. արծ.

ՃՈՒՍԷՂ ամսագիր Բանասիրական, հատոր Ա. 1859. Գինն է 4 ուու. արծաթ:

ՃՈՒՍԷՂ ամսագիր Կրօնական, Բանասիրական և Ազգային գիտելեաց, հատոր Բ. 1860—1861. Գինն է 5 ուու. արծաթ:

ԽՄԲԱԳՐԻԶ Գ. ՄՍԵՐԵԱՆՑ